ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/34

ք. Երևան «25» 03 2020թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վ. Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և «ՊԵՅՅՈ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ավետիկ Գևորգյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **5 աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 5525000 (հինգ միլիոն հինգ հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև

ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	**«ՊԵՑՑՈ» ՍՊԸ**
Ք. Երևան, Կառավարական տուն 2	**Հասցե՝ ՀՀ, ք. Ստեփանավան, Գ. Նժդեհի 37**
ՀՀ ՖՆ աշխատակազմի	**ՀՎՀՀ՝ 06955741**
գործառնական վարչություն	**«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ**
Հ/Հ 900011032688	**Հ/Հ՝ 16033017291900**
ՀՎՀՀ 02698732	
Գլխավոր քարտուղարի տեղակալ՝	**Տնօրեն՝**
---------- Վ. Գասպարյան	---------- Ա. Գևորգյան
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1
«25» 03 2020 թ. կնքված
ՀՀԿԳՄՄՆԳՀԾՁԲ-20/34 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Չափա-բաժին	Գումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ծառայության						
		Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Քանակը	Միավորի արժեքը, ՀՀ դրամ	Ընդամենը գինը, ՀՀ դրամ	Մատուցման ժամկետը*
1	92621110-1	սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայություններ	Ծառայությունը նախատեսում է «Հայաստանի Հանրապետության գյուղական մարզական խաղեր» մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) անցկացում: Մրցույթն իրականացվում է համաձայն կից ներկայացվող ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի փետրվարի 4-ի № 97-Ա/2 հրամանով հաստատված կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ): Մրցույթի անցկացման աշխատանքները համակարգում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) մասսայական սպորտի և ֆիզիկական դաստիարակության քաղաքականության վարչությունը (այսուհետ՝ Վարչություն): Մրցույթն անցկացվելու է հետևյալ փուլերով. 1. մարզային փուլ, 2. եզրափակիչ փուլ: Մրցույթի փուլերի անցկացումը նախատեսվում է իրականացնել ներքոնշված չափանիշներին համապատասխան:	դրամ	1	5525000	5525000	01.08.2020թ-ից սկսած, բայց ոչ շուտ, քան պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20-րդ օրացուցային օրվանից սկսած, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում մինչև 10.09.2020թ

Միջոցառման փուլերի անցկացման չափանիշներ

1. Մարզային փուլ

Մարզային փուլը անցկացվելու է Հայաստանի Հանրապետության 10 մարզերում (ընդհանուր քանակը՝ 10 տարածաշրջան) 2020 թվականի օգոստոսի 1-ից 10-ը՝ բայց ոչ շուտ, քան պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20-րդ օրացուցային օրվանից սկսած, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում՝ 10 օրացուցային օր տևողությամբ: Կատարողը համապատասխան վկայագրերը (հավաստագիր), մրցավարների և բժշկի սնունդը պետք է ապահովի ՀՀ 10 մարզերում (համաձայն Վարչության կողմից տրված ցուցակի և ժամանակացույցի): Մրցույթի Կանոնակարգի պահանջների համաձայն համապատասխան ցուցակը և ժամանակացույցը Վարչության կողմից Կատարողին է տրամադրվում Մրցույթը սկսելուց ոչ ուշ քան 5 օր առաջ: Կատարողը կազմում է ցուցակները, որոնք հետագայում դառնում են հանձնման-ընդունման ակտի անբաժանելի մասը: Կատարողը իրականացնում է բոլոր կազմակերպչական աշխատանքները՝ համաձայնեցնելով Վարչության հետ:

Մարզային փուլի անցկացման համար անհրաժեշտ է հետևյալը՝

1.1 Յուրաքանչյուր տարածաշրջանում մրցավարական հանձնաժողովը բաղկացած է 11 մրցավար և 1 բժշկից (ընդհանուր քանակը՝ 120 անձ, մրցավարական հանձնաժողովների ցուցակը տրամադրվում է Վարչության կողմից): Մարզային փուլի ընթացքում մրցավարական հանձնաժողովներին տրամադրվում է սնունդ: Սննդի տրամադրումը կազմակերպվում է տեղերում՝ Կատարողի կողմից (սնունդը՝ ճաշ (հաց, աղցան երկու տեսակի, պանիր, ապուր, հիմնական ուտեստ խավարտով (երկու տեսակ՝ ըստ ընտրության), ջուր, զովացուցիչ ըմպելիք) թեյ, սուրճ):

- Գլխավոր մրցավարական հանձնաժողովի սնունդ՝ 3 օր, 2 գլխավոր մրցավար՝ օրը մեկ անգամյա սնունդ,
- Մրցավարների և բժշկի սնունդ՝ 2 օր, 9 մրցավար և 1 բժիշկ՝ օրը մեկ անգամյա սնունդ:

1.2 Մարզային փուլում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված թիմերին պարգևատրելու համար վկայագիր (հավաստագիր, ընդհանուր քանակը՝ 360 հատ), չափսը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220 գ/քմ, (օրինակելի ձևը կցվում է) : Տեքստը համաձայնեցնել վարչության հետ:

2. Եզրափակիչ փուլ

Եզրափակիչ փուլը անցկացվելու է Վանաձոր քաղաքում 2020 թվականի սեպտեմբերի 7-ից 10-ը: Կատարողը Կանոնակարգի պահանջների համաձայն պետք է ապահովի Մրցույթի անցկացման համար անհրաժեշտ համապատասխան տարածքը, դրա ձևավորումը, գույքը, վկայագրերը (հավաստագիր, շնորհակալագիր), գավաթները, << 10 մարզերից ժամանած մասնակիցների գիշերակացը, մասնակիցների և մրցավարների սնունդը, մասնակիցների և մրցավարների ուղղևորափոխադրում, հաղթող մարզիկներին դրամական պարգևը, որը մանրամասն ներկայացվում է ստորև: Կատարողը կազմում է մրցանակների, այդ թվում՝ դրամական պարգևների, գույքի բաշխման ցուցակները, որոնք հետագայում դառնում են հանձնման-ընդունման ակտի անբաժանելի մասը: Կատարողը իրականացնում է բոլոր կազմակերպչական աշխատանքները՝ համաձայնեցնելով Վարչության հետ:
Եզրափակիչ փուլի անցկացման համար անհրաժեշտ է հետևյալը՝

Եզրափակիչ փուլում 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-10-րդ տեղերը գրաված թիմերին տրամադրվում է.

1. վկայագիր (հավաստագիր)՝ 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված թիմերին (ընդհանուր քանակը՝ 39 հատ): Չափսը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220 գ/քմ (օրինակելի ձևը կցվում է): Տեքստը համաձայնեցնել Վարչության հետ:
2. վկայագիր (շնորհակալագիր)՝ 4-10-րդ տեղեր գրաված թիմերին (ընդհանուր քանակը՝ 7 հատ): Չափսը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220 գ/քմ, (օրինակելի ձևը կցվում է): Տեքստը համաձայնեցնել Վարչության հետ:
3. վկայագրի (հավաստագրի և շնորհակալագրի) գրպանիկով թղթապանակ, զինանշանով (ընդհանուր քանակը՝ 10 հատ): Չափսը՝ 32 x 22 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220գ/քմ: Տեքստը համաձայնեցնել Վարչության հետ:
4. մեդալներ՝ 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված թիմերի մասնակիցներին (ընդհանուր քանակը՝ 36 հատ) Չափսը՝ 5 սմ տրամագծով x 3 մմ հաստությամբ, մետաղե ձուլվածք, եռագույն ժապավենով՝ 0.80 սմ երկարությամբ, սինթետիկ հումքից: Տեսքը համաձայնեցնել նախարարության Վարչության հետ:
5. դրամական մրցանակ՝ 1-ին,2-րդ և 3-րդ տեղերը գրաված անհատներին՝
   - 1-ին տեղ՝ 12 մարդ x 45.000 << դրամ (ներառված հարկերն ու տուրքերը)
   - 2-րդ տեղ՝ 12 մարդ x 35.000 << դրամ (ներառված հարկերն ու տուրքերը)
   - 3-րդ տեղ՝ 12 մարդ x 25.000 << դրամ (ներառված հարկերն ու տուրքերը)
6. Գավաթներ՝ 1-ին, 2-րդ և 3-րդ գրաված պատվիրակության համար (յուրաքանչյուր չափսից՝ 1 հատ, ընդամենը՝ 3 հատ): Չափսերը՝ 65 սմ, 60 սմ և 55 սմ բարձրությամբ, ոսկեգույն, միանման, էբոնիտե պատվանդանով վրան գրված միջոցառման անվանումը և տեղը: Տեքստը համաձայնեցնել Վարչության հետ:
7. Գավաթներ՝ 1-ին, 2-րդ և 3-րդ գրաված անհատների համար (ընդամենը՝ 6 հատ): Չափսերը՝ 35 սմ բարձրությամբ, ոսկեգույն, միանման, էբոնիտե պատվանդանով վրան գրված միջոցառման անվանումը և տեղը: Տեքստը համաձայնեցնել Վարչության հետ:

Մարզագույք՝ 1-ին,2-րդ և 3-րդ տեղերը գրաված թիմերին՝

1. Ֆուտբոլի գնդակ՝ բնական կամ արհեստական կաշվից (ընդհանուր քանակը՝ 36 հատ (1-ին տեղ՝ 14 հատ, 2-րդ տեղ՝ 12 հատ և 3-րդ տեղ՝ 10 հատ)), N 5 չափի (68-70 սմ շրջանագիծ), քաշը 420-440 գրամ, 32 կտորից (պանել) կարված՝ առնվազն 5 սինթետիկ թելիկներից գործված կարի թելով, 4 շերտ, պոլիեստերի կամ բամբակե ներքին շերտով, ռետինե կամ լատեքսե միջուկով (կամեռով):
2. Գնդակ վոլեյբոլի (ընդհանուր քանակը՝ 36 հատ (1-ին տեղ՝ 14 հատ, 2-րդ տեղ՝ 12 հատ և 3-րդ տեղ՝ 10 հատ)), բնական կամ արհեստական կաշվից, N 5-6 չափի (65-67սմ շրջանագիծ), քաշը 260-280 գրամ, 18 կտորից (պանել) ձեռքով կամ մեքենայով կարված՝ առնվազն 5 սինթետիկ թելիկներից գործված կարի թելով, 2 շերտ, պոլիեստերի կամ բամբակե ներքին շերտով, ռետինե կամ լատեքսե միջուկով (կամեռով), բազմերանգ գունավորմամբ:
3. Գնդակ բասկետբոլի (ընդհանուր քանակը՝ 36 հատ (1-ին տեղ՝ 14 հատ, 2-րդ տեղ՝ 12 հատ և 3-րդ տեղ՝ 10 հատ)), կաշվե կամ փոխարինող հումքից, N 5-6 չափի (75-88սմ շրջանագիծ), քաշը 567-650գրամ, 12 կտորից (պանել), երկուգույնանի, բացօդյա և փակ դահլիճներում օգտագործելու համար:

4. Վոլեյբոլի ցանց (ընդհանուր քանակը՝ 12 հատ (1-ին տեղ՝ 5 հատ, 2-րդ տեղ՝ 4 հատ և 3-րդ տեղ՝ 3 հատ)): Ցանցի բարձրությունը 1մ լայնությանբ 9.5-10 մ: Վերին եզրը 7սմ բարձրությամբ իսկ ստորին եզրը 5 սմ բարձրությամբ ժապավեն ներով սահմանազատված: Վերին ժապավենի միջով անցկացված 4մմ հաստությամբ առնվազն 15 մ երկարությամբ պողպատե ճոպանով, ներքևի ժապավենի միջով՝ ստորին եզրը ձգելու պարանով, գործվացքը 10x10 սմ անցքերով, սև գույնի սինթեթիկ մանրաթելերից գործված 2-3 մմ հաստությամբ թելից: Ցանցի ծայրերում իրարից 9 մ հեռավորության վրա տեղադրված են 1 մ բարձրությամբ և 5 սմ լայնությամբ դաշտի սահմանները եզրագծող ժապավեններ:

5. Գործած ցանց (ֆուտբոլի դարպասի ցանց), (ընդհանուր քանակը՝ 12 հատ (1-ին տեղ՝ 4 հատ, 2-րդ տեղ՝ 4 հատ և 3-րդ տեղ՝ 4 հատ)), ցանցի բարձրությունը 2 մ լայնությունը 7 մ: Գործվացքը 10x10 սմ անցքերով, սև գույնի սինթեթիկ մանրաթելերից գործված 2-3 մմ հաստությամբ թելից, նախատեսնված է փոքր դարպասների համար:

6. Բասկետբոլի ցանց օղակով՝ պատրաստված մետաղից (ընդհանուր քանակը՝ 9 հատ (1-ին տեղ՝ 4 հատ, 2-րդ տեղ՝ 3 հատ և 3-րդ տեղ՝ 2 հատ)), օղակի տրամագիծը 45 սմ, ներկված կարմիր գույնով, ցանցը գործվացքը 5x5 սմ անցքերով, տարբեր գույներով, սինթեթիկ մանրաթելերից գործված 2-3 մմ հաստությամբ թելից:

Մարզագույք՝ 4-ից 10-րդ տեղերը գրաված թիմերին՝

1. Ֆուտբոլի գնդակ՝ բնական կամ արհեստական կաշվից (ընդհանուր քանակը՝ 21 հատ (4-ից 10-րդ տեղեր գրաված թիմերին՝ 3 ական)), N 5 չափի (68-70 սմ շրջանագիծ), քաշը 420-440 գրամ, 32 կտորից (պանել) կարված՝ առնվազն 5 սինթետիկ թելիկներից գործված կարի թելով, 4 շերտ, պոլիեստերի կամ բամբակե ներքին շերտով, ռետինե կամ լատեքսե միջուկով (կամեռով):

2. Գնդակ վոլեյբոլի՝ բնական կամ արհեստական կաշվից (ընդհանուր քանակը՝ 21 հատ (4-ից 10-րդ տեղեր գրաված թիմերին՝ 3 ական)), N 5-6 չափի (65-67սմ շրջանագիծ), քաշը 260-280 գրամ, 18 կտորից (պանել) ձեռքով կամ մեքենայով կարված՝ առնվազն 5 սինթետիկ թելիկներից գործված կարի թելով, 2 շերտ, պոլիեստերի կամ բամբակե ներքին շերտով, ռետինե կամ լատեքսե միջուկով (կամեռով), բազմերանգ գունավորմամբ:

3. Գնդակ բասկետբոլի՝ կաշվե կամ փոխարինող հումքից (ընդհանուր քանակը՝ 21 հատ (4-ից 10-րդ տեղեր գրաված թիմերին՝ 3 ական)), N 5-6 չափի (75-88սմ շրջանագիծ), քաշը 567-650 գրամ, 12 կտորից (պանել), երկուգույնանի, բացօդյա և փակ դահլիճներում օգտագործելու համար:

4. Վոլեյբոլի ցանց (ընդհանուր քանակը՝ 14 հատ (4-ից 10-րդ տեղեր գրաված թիմերին՝ 2 ական))՝ ցանցի բարձրությունը 1մ լայնությանբ 9.5-10 մ: Վերին եզրը 7սմ բարձրությամբ իսկ ստորին եզրը 5 սմ բարձրությամբ ժապավեն ներով սահմանազատված: Վերին ժապավենի միջով անցկացված 4մմ հաստությամբ առնվազն 15 մ երկարությամբ պողպատե ճոպանով, ներքևի ժապավենի միջով՝ ստորին եզրը ձգելու պարանով, գործվացքը 10x10 սմ անցքերով, սև գույնի սինթեթիկ մանրաթելերից գործված 2-3 մմ հաստությամբ թելից: Ցանցի ծայրերում իրարից 9 մ հեռավորության վրա տեղադրված են 1 մ բարձրությամբ և 5 սմ լայնությամբ դաշտի սահմանները եզրագծող ժապավեններ:

5. Գործած ցանց (ֆուտբոլի դարպասի ցանց) (ընդհանուր քանակը՝ 14 հատ (4-ից 10-րդ տեղեր գրաված թիմերին՝ 2 ական))՝ ցանցի բարձրությունը 2 մ լայնությունը 7 մ: Գործվացքը 10x10 սմ անցքերով, սև գույնի սինթեթիկ մանրաթելերից գործված 2-3 մմ հաստությամբ թելից, նախատեսնված է փոքր դարպասների համար:

6. Բասկետբոլի ցանց օղակով՝ պատրաստված մետաղից (ընդհանուր քանակը՝ 14 հատ (4-ից 10-րդ տեղեր գրաված թիմերին՝ 4 ական). օղակի տրամագիծը 45 սմ, ներկված կարմիր գույնով, ցանցը գործվացքը 5x5 սմ անցքերով, տարբեր գույներով, սինթեթիկ մանրաթելերից գործված 2-3 մմ հաստությամբ թելից:

Եզրափակիչ փուլում Կատարողը ապահովում է << 10 մարզերից ժամանած մասնակիցների

- կեցությունը Վանաձոր քաղաքում՝ (3-5 տեղանոց համարներ փափուկ մահճակալներով, ապահոված սանհանգույցներով, տաք և սառը ջրի առկայությամբ):
  3 թիմ x 4 գիշեր x 11 մասնակից (ընդհանուր քանակը՝ 33 մասնակից (7 տղա, 3 աղջիկ և 1 մեծահասակ՝ տղամարդ կամ կին)):
  7 թիմ x 3 գիշեր x 11 մասնակից (ընդհանուր քանակը՝ 77 մասնակից (7 տղա, 3 աղջիկ և 1 մեծահասակ՝ տղամարդ կամ կին)):
- սնունդը (նախաճաշ (հաց, պանիր, կարագ, նրբերշիկ, ձու, թթվասեր, թեյ կամ սուրճ), ճաշ (հաց, աղցան երկու տեսակի, պանիր, ապուր, հիմնական ուտեստ խավարտով (երկու տեսակ՝ ըստ ընտրության), ջուր, զովացուցիչ ըմպելիք) թեյ, սուրճ), ընթրիք (հաց, աղցան երկու տեսակի, պանիր, հիմնական ուտեստ խավարտով (երկու տեսակ՝ ըստ ընտրության), ջուր, զովացուցիչ ըմպելիք) թեյ, սուրճ: Սննդի տրամադրումը կազմակերպվում է տեղերում՝ Կատարողի կողմից:
  3 թիմ x 5 օր x 11 մասնակից՝ (ընդհանուր քանակը՝ 33 մասնակից)
  7 թիմ x 4 օր x 11 մասնակից՝ (ընդհանուր քանակը՝ 77 մասնակից):
- Մասնակիցների ուղևարափոխադրում (ընդամենը քանակը՝ 110 անձ (10 թիմ x 11 անձ): Անհրաժեշտ տրանսպորտային միջոցը պետք է լինի տեխնիկապես սարքին և մաքուր վիճակում, փափուկ նստատեղերով, ապահովված լինի բոլոր անհրաժեշտ սարքերով (անվտանգության գոտիներ, օդափոխիչ): Մասնակիցների տեղափոխումը իրականացվում է << մարզկենտրոններից՝ քաղաք Վանաձոր և հետադարձ ուղղությամբ: Մասնակիցների տրանսպորտի ապահովում Վանաձոր քաղաքում՝ հյուրանոցից մարզադահլիճ և հակառակ ուղղությամբ 10 թիմ x 11 անձ x 3 օր (ընդամենը քանակը՝ 110 անձ):

Եզրափակիչ փուլում մրցավարական հանձնաժողովին (մրցավարական հանձնաժողովը բաղկացած է 20 մրցավարից և 2 բժշկից; ընդհանուր քանակը՝ 22 անձ) տրամադրվում է

- Սնունդ (սննդի տրամադրումը կազմակերպվում է տեղերում՝ Կատարողի կողմից): Սնունդը՝ ճաշ (հաց, աղցան երկու տեսակի, պանիր, ապուր, հիմնական ուտեստ խավարտով (երկու տեսակ՝ ըստ ընտրության), ջուր, զովացուցիչ ըմպելիք) թեյ, սուրճ): Գլխավոր մրցավարական հանձնաժողովի սնունդ՝ 5 օր, 2 գլխավոր մրցավար՝ օրը մեկ անգամյա սնունդ,

մրցավարների և բժշկի սնունդ՝ 4 օր, 12 մրցավար և 2 բժիշկ՝ օրը մեկ անգամյա սնունդ: Մրցավարների (դրսի) սնունդ՝ 4 օր, 6 մրցավար՝ օրը երեք անգամյա սնունդ: Նախաճաշ (հաց, պանիր, կարագ, նրբերշիկ, ձու, թթվասեր, թեյ կամ սուրճ), ճաշ (հաց, աղցան երկու տեսակի, պանիր, ապուր, հիմնական ուտեստ խավարտով (երկու տեսակ՝ ըստ ընտրության), ջուր, զովացուցիչ ըմպելիք) թեյ, սուրճ), ընթրիք (հաց, աղցան երկու տեսակի, պանիր, հիմնական ուտեստ խավարտով (երկու տեսակ՝ ըստ ընտրության), ջուր, զովացուցիչ ըմպելիք) թեյ, սուրճ):

- Երևան քաղաքից ժամանած մրցավարներին (6 անձ x 3 գիշեր, (տղամարդ կամ կին)՝ երկտեղանոց համարներ փափուկ մահճակալներով, ապահոված սանհանգույցներով, տաք և սառը ջրի առկայությամբ:
- Մրցավարների ուղևորափոխադրում (ընդամենը քանակը՝ 6 անձ): Անհրաժեշտ տրանսպորտային միջոցը պետք է լինի տեխնիկապես սարքին և մաքուր վիճակում, փափուկ նստատեղերով, ապահովված լինի բոլոր անհրաժեշտ սարքերով (անվտանգության գոտիներ, օդափոխիչ): Մրցավարների տեղափոխումը իրականացվում է Երևան քաղաքից՝ քաղաք Վանաձոր և հետադարձ ուղղությամբ:
- Մրցավարներին դրամական պարգև (20 մրցավար)՝ յուրաքանչյուրին 15.000-ական ՀՀ դրամ (ներառված հարկերն ու տուրքերը)

  * Մրցավարական հանձնաժողովի ցուցակը տրամադրվում է Վարչության կողմից)

Եզրափակիչ փուլի մրցույթի անցկացման համար Կատարողը ապահովում է.

- Մարզադաշտ և աթլետիկական փակ մարզասրահ Վանաձոր քաղաքում: Մարզասրահը ունենա ռետինապատ ծածկույթով վազքուղիներ, գծանշված, մարզասրահը պետք է ունենա առնվազն 25 մետր լայնություն և 70 մետր երկարություն, կահավորված նստատեղերով հանդիսատեսի համար, պարգևատրման արարողությունը կազմակերպելու համար պատվանդանի առկայությամբ: Մարզասրահը և հարակից տարածքի ձևավորում դրոշակներով և պաստառներով, միջոցառման ավարտից հետո ապամոնտաժում և պահեստավորում: Կահավորման տեսքը համաձայնեցնել Վարչության հետ: (ընդհանուր քանակը՝ 2 օր):
- Ձայնային տեխնիկայի ապահովում մարզադահլիճում: Բարձրախոսներ՝ ընդհանուր 7 ԿՎ հզորությամբ, 2 հատ միկրոֆոն առանց լարի՝ հեռակառավարվող, 1 հատ միկրոֆոն լարով, միկրոֆոնի տակդիր՝ 3 հատ, ձայնի կառավարման միկշերային վահանակ: (ընդհանուր քանակը 1 օր):
- Հաղորդավարի ծառայություն՝ 1 օր:
- Միջոցառման ավարտին ճայթռուկ մարզադահլիճում (հրավառություն): (ընդհանուր քանակը՝ 6 կետից):
- Թղթե արագակար (ընդհանուր քանակը՝ 10 հատ)՝ կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 (210 x 297 մմ) ձևաչափի թերթերի համար:
- Ֆայլ (ընդհանուր քանակը՝ 50 հատ)՝ թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար, արագակալներին ամրացնելու հնարավորությամբ:
- Թղթե կպչուն ժապավեն (ընդհանուր քանակը՝ 3 հատ)՝ տնտեսական, մեծ գլանափաթեթված ժապավեն 48 մմ լայնությամբ, սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ կամ 0,030-0,060 մմ, ժապավենի երկարությունը՝ 100մ:
- Թուղթ A4 չափսի 1 (21 x 29.7 (ընդհանուր քանակը՝ 2 տուփ))՝ չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված,80 գ/մ2 (210 x 297) մմ:
- Թղթապանակ (ռեգիստրատոր) (ընդհանուր քանակը՝ 10 հատ)՝ 2-օղակով, պլաստիկ, լայնությունը՝ 80 մմ, A4 չափսի:
- Գրիչ գնդիկավոր (ընդհանուր քանակը՝ 10 հատ)՝ տարբեր գույների, տարբեր տեսակի կառուցվածքներով, մեծ և փոքր չափերի:
- Տրանսպորտային միջոց (ընդհանուր քանակը՝ 1 հատ)՝ բեռնատար մեքենա եզրափակիչ փուլի մարզագույքը տեղափոխելու համար:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Ք. Երևան, Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011032688
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղարի տեղակալ՝

_____ Վ. Գասպարյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ՊԵՑՑՈ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Ստեփանավան, Գ. Նժդեհի 37
ՀՎՀՀ՝ 06955741
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 16038017291900

_____ Ա. Գևորգյան
/ստորագրություն/

Հավելված N 2
«25» 03 2020 թ. կնքված
ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/34 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայություն														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	Դեկտեմբեր	**Ընդամենը**
1	92621110-1	սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայություններ	0	0	0	0	0	0	0	5525000	5525000	5525000	5525000	5525000	**5525000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Ք. Երևան, Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011032688
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղարի տեղակալ՝

_____ **Վ. Գասպարյան**
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ՊԵՑՑՈ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Ստեփանավան, Գ. Նժդեհի 37
ՀՎՀՀ՝ 06955741
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 16033017291900

_____ **Ա. Գևորգյան**
/ստորագրություն/ Կ.Տ